ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/29

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2020թ. թիվ 26/26-1/1074-2020 գրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին և «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.01.2020թ. թիվ ՊՆ/02/208-2020 գրության հիման վրա, 30.01.2020թ. թիվ 26/26-1/1074-2020 գրությամբ նախաձեռնել է «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին և «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ԲԸ-ին (հետայսու նաև՝ Կոնսորցիում) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի և «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի և «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ԲԸ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Վիէյչ գրուպ» և «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ընկերությունները, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/29 ընթացակարգի շրջանակներում 05.02.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.01.2020թ. թիվ ՊՆ/02/208-2020 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի («Ինստրումենտ կոմպլեկտ սերվիս» ԲԸ-ի հետ համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր) հետ 08.07.2019թ. կնքված N «ԳՀԱՊՁԲ-20/6-2» գնման պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» պարբերության պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. հունվարի 21-ին միակողմանի մասնակի լուծել է N «ԳՀԱՊՁԲ-20/6-2» պայմանագիրը:

Պատվիրատուն միաժամանակ տեղեկացրել է, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 23.01.2020թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/29 ընթացակարգի շրջանակներում 05.02.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/29 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/29 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի և «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ԲԸ-ի միջև 08.07.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20/6-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով (հետայսու՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (հետայսու՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 22.01.2020թ. թիվ ԴՎԱ/200 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, 21.01.2020թ. միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2020թ. թիվ 26/26-1/1074-2020 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 24.01.2020թ. թիվ ՊՆ/02/208-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի և «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ԲԸ-ի միջև 08.07.2019թ. կնքվել է «ԳՀԱՊՁԲ-20/6-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագրի համաձայն՝ 1-ին չափաբաժնի մասով Կոնսորցիումը պարտավորվել է մատակարարել 5000 հատ «Ձեռքի գործիքներ (Լինգ)» ապրանքը:

Պայմանագրի N 1 հավելված՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվել է 30.10.2019թ.:

Կողմերի միջև 30.10.2019թ. կնքվել է Պայմանագրի N 1 փոփոխությունը, որի N 1 հավելվածի համաձայն՝ Կոնսորցիումը 5000 հատ «Ձեռքի գործիքներ (Լինգ)» ապրանքը պարտավորվել է մատակարարել մինչև 29.11.2019թ.:

Համաձայն Պատվիրատուի կողմից 30.12.2019թ. կազմված Պայմանագրի կատարման վերաբերյալ բացասական եզրակացության՝ Կոնսորցիումի կողմից 30.12.2019թ. դրությամբ չի մատակարարվել 2700 հատ «Ձեռքի գործիքներ (Լինգ)» ապրանքը և ուշացումը կազմել է 31 օր:

«Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 22.01.2020թ. թիվ ԴՎԱ/200 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը, 21.01.2020թ. միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Նույն կետի 2.1.7.1. ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով՝ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ի և «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ԲԸ-ի կոնսորցիումն իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 08.07.2019թ. կնքված պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում, այն է՝ մինչև 29.11.2019թ., ՀՀ պաշտպանության նախարարությանը 5000 հատ «Ձեռքի գործիքներ (Լինգ)» ապրանք մատակարարելու պարտականությունը: Պայմանագրի չկատարման վերաբերյալ թիվ 2 եզրակացության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Կոնսորցիումը չի կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունն ամբողջ ծավալով և 30.12.2019թ. դրությամբ չի մատակարարել 2700 հատ «Ձեռքի գործիքներ (Լինգ)» ապրանքը և ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի: Այսինքն՝ Կոնսորցիումը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

....

3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝

պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ համատեղ գործունեության (կոնսորցիում) դեպքում մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է, և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

«ԳՀԱՊՁԲ-20/6-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագրի 8-րդ կետի 8.6 ենթակետով սահմանվել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիում) պայմանագիր կնքելու միջոցով «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ԲԸ-ի հետ, ուստի պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն:

Նման պայմաններում, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ն և «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ԲԸ-ն թույլ են տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են ընկերություններին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցերի ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2020թ. թիվ 26/26-1/1074-2020 գրությամբ «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին և «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վիէյչ գրուպ» ՍՊԸ-ին և «Ինստրումենտ Կոմպլեկտ Սերվիս» ԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**